

հաւատարմութիւնը (1) , բայց խնդրագրով մըն ալ դիմեցին Յովհաննէս Ա.-ի , որպէս զի չըլլայ թէ իր նախկին իրաւունքներէն ու առանձնաշնորհումներէն ո՛ր եւ է կերպով տուժէ քաղաքը , նոր եւ իրենց համար անձանօթ վեհապետի մը իշխանութեան յանձնուելուն հետեւանքով :

Յովհաննէս թագաւորը շուտով հանգարտեցուց Մաղբիղի բնակիչներուն սիրտը , նոյն ամսի 12-ին իր պալատին մէջ դումարած աւագաժողովին հաւանութեան ենթարկեալ հետեւեալ պահանջադիր-պատասխանն յանձնելով անոնց պատգամաւորներուն .

Պատասխան Յովհաննէսի Ա. առ քաղաքացիս Մաղբիղի(2)

Յանուն Աստուծոյ , Հօր , եւ Որդւոյ , եւ Հոգւոյն Սրբոյ , որք եւս երեք անձինք եւ մի ճշմարիտ Աստուած , որ յաւիտեանս կեայ եւ թագաւորէ . եւ յանուն մօր նորա՝ Սրբուհի Մարիամու , ամենեղանիկ փառաւորեալ Կուսի , թագուհւոյ մխիթարութեան , որ Մեր օրրուհին ու բարեխօսն է մեր բոլոր գործոց մէջ . նոյնպէս եւ ի պատիւ եւ ի սպաս ամենայն սրբոց երկնային թագաւորութեան :

Եւ որովհետեւ թագաւորներու սրուած է մեծամեծ շնորհներ ընել , ո՛ւր որ դանուի իրենց շնորհ ըրած վայրը , վասն զի գիտնի թէ այս կերպով աւելի սիրելի կը դառնան , մանաւանդ երբ իրենց ճորտերո՛ւն ու երկիրներո՛ւն ընեն եւ հաստատեն շնորհներ ու նպաստներ , որպէս զի անոնք աւելի պատիւ ստանան , եւ այդ երկիրներու բնակիչները դո՛ւ մնան , եւ միշտ բարի յիշատակ թողուն աշխարհիս վրայ . ուստի՝ ասիկա նկատի առնելով՝ ներկայ շնորհաթղթովս կը փափագինք , որ ամէն անոնք որ հիմա կենդանի են եւ ամէն անոնք որ պիտի ապրին ասկէ ետք՝ գիտնան , թէ Մենք՝ տէր Յովհաննէս , շնորհին Աստուծոյ , թագաւոր Կաստիլյայի , Լէոնի , Տոլէդոյի , Գալիսիայի , Սէվիլյայի , Կորդովայի , Մուրսիայի , ինքնի , Ալգարվէի , Ալջէզիւրայի , տանուաէր Լարայի ու Վիզկայայի ու Մոլինայի , թագաւորելով իմ կնոջս՝ արկին Բէատրիզ թագուհիի ու իմ զուգիս՝ Կաստիլյայի ու Լէոնի թագաւորութիւններու համար առաջին գահաժառանգ արքայազուն տէր Ենրիկի , կը փափագինք որ նոյնութեամբ պահուին Մաղբիղ քաղաքի առանձ-

(1) Այս որոշումը նոյնութեամբ արձանագրուած է ասեմագրութեան մը մեջ , զոր տե՛ս Էրես 93 :
(2) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XI.